

ԱՆՆԱ ԴԱՆԻԲԵԿՅԱՆ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի
և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական
դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ



**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱՄ ԱՅԼ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ
ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՉԱՐԱՇԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՔՐԵԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ**

Սույն հոդվածում հետազոտվում են առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածի կիրառման հետ կապված հիմնախնդիրներն ու իրավական հարցերը: Հոդվածը պարունակում է քրեական իրավունքի տեսության մեջ ձևավորված, տվյալ նորմի կիրառման ոլորտի վերաբերյալ տարբեր հեղինակների կողմից արտահայտված կարծիքների և դիրքորոշումների վերլուծություն: Հոդվածում բացահայտվում են տվյալ հանրորեն վտանգավոր արարքի էությունն ու առանձնահատկությունները, վերլուծվում է հետազոտվող հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշների օրենսդրական նկարագրությունը, ինչի հիման վրա վերհանվում են մասնավոր հատվածի ծառայության ոլորտում կատարվող հանցագործությունների համար քրեական պատասխանատվության մասին օրենսդրության բացերը և ձևավորվում են գործնական առաջարկություններ դրա կատարելագործման վերաբերյալ:

Հիմնարար բառեր - լիազորությունները չարաշահելը, քրեական պատասխանատվություն, առևտրային կամ այլ կազմակերպություններ:

ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու իրենց կարգադրիչ կամ այլ լիազորություններն այդ կազմակերպության շահերին հակառակ և իր կամ ուրիշ անձանց օգտին օգտագործելու, առավելություններ ձեռք բերելու կամ այլ անձանց վնաս պատճառելու նպատակով օգտագործելու համար, եթե անձանց, կազմակերպությունների կամ պետության իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս է պատճառվել:

Իրավաբանական գրականության մեջ լիազորություններն օգտագործելը բնութագրվում է որպես անձի մոտ առկա կառավարչական գործառույթների կատարման կապակցությամբ իրեն վերապահված իրավական և փաստացի հնարավորությունների հիման վրա որոշումներ ընդունելը կամ գործողություններ կատարելը: Վերոգրյալի կապակցությամբ հարց է առաջանում, թե արարքը ակտիվ գործողություններից բացի կարող է արդյոք դրսևորվել նաև անգործությամբ, այսինքն՝ արտահայտվել համապատասխան սուբյեկտի կողմից իր ծառայողական պարտականությունները չկատարելով, թե՛ ոչ: Հարկ է նշել, որ ի տարբերություն ՀՀ քր. օր.-ի 308-րդ հոդվածով նախատեսված պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հանցակազմի՝ ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածի դիսպոզիցիան ուղղակի նշում չի պարունակում ծառայողական պարտականությունները չկատարելու

վերաբերյալ: Մինչդեռ օրենքից, այլ նորմատիվ-իրավական ակտերից, համապատասխան կազմակերպության կանոնադրությունից, ներքին կամ անհատական իրավական ակտերից, տվյալ անձի հետ կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրի դրույթներից, կազմակերպության կամ որոշակի ինստիտուտի գործունեության սկզբունքներից և խնդիրներից բխող պարտականությունների խախտումը կարող է արտահայտվել նաև այդպիսի պարտականությունները կատարելուց խուսափելով, որի արդյունքում այլ սուբյեկտների իրավունքներին և օրինական շահերին նույնպես կարող է վնաս պատճառվել: Այսպիսով, հիմնավոր ենք համարում քրեագետների մեծամասնության կողմից ընդունվող այն տեսակետը, որ լիազորությունները չարաշահելը կարող է դրսևորվել թե՛ գործողությամբ և թե՛ անգործությամբ: Որպես անգործությամբ դրսևորվող լիազորությունները չարաշահելու օրինակ կարելի է պատկերացնել այնպիսի իրավիճակ, երբ համապատասխան լիազորություններով օժտված անձը, որը կազմակերպության հիմնադիր փաստաթղթերի, այլ իրավական ակտերի, աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրի համաձայն պարտավոր է գործել ի շահ տվյալ կազմակերպության՝ դրա կանոնադրական խնդիրներին համապատասխան, խուսափում է ընկերության համար շահավետ պայմաններով որևէ գործարք

կնքելուց (օրինակ՝ տարածքը կամ գույքը վարձակալության հանձնելու, ծառայությունների, աշխատանքների կամ ապրանքների վաճառքի կամ գնման կամ այլ գործարք կատարելուց), անհիմն ձգձգում է հարցի լուծումը այն դեպքում, երբ նա օժտված է նման իրավասությամբ, և դա ակնհայտորեն բխում է ընկերության շահերից: Նման անգործությունը, օրինակ, կարող է նպատակ հետապնդել հետագայում համապատասխան գործարք կնքելու մեկ այլ կազմակերպության հետ, որի սեփականատերն է տվյալ անձի մերձավորը: Մինչդեռ, հարցի լուծումը ձգձգելու արդյունքում կազմակերպությունը չի ստանում շահույթ, որը կարող էր ստանալ հարցը ժամանակին լուծելու դեպքում (օրինակ՝ որոշակի ժամանակահատվածի համար վարձավճար չի ստանում կամ այն ստանում է պակաս չափով՝ մեկ այլ կազմակերպության հետ նվազ շահավետ պայմաններով պայմանագիր կնքելու դեպքում): Այսպիսով, բերված օրինակում պասսիվ կերպով դրսևորվող լիազորությունների չարաշահումը արտահայտվում է կազմակերպության գույքը ի շահ այդ կազմակերպությանը պատշաճ կերպով օգտագործելու, տնօրինելու կամ կառավարելու պարտականությունը չկատարելով:

Այդ կապակցությամբ գտնում ենք, որ ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածով նախատեսված արարքի օբյեկտիվ կողմի օրենսդրական նկարագրությունը գուրկ չէ թերություններից, քանի որ ոչ բավարար չափով հստակ ձևակերպված լինելու պատճառով թույլ չի տալիս միատեսակ մոտեցում ձևավորել պասսիվ կերպով դրսևորվող արարքի որակման հարցում: Այսպես, ՀՀ քր. օր.-ի 308-րդ հոդվածով նախատեսված պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հանցակազմի դիսպոզիցիայում պաշտոնեական դիրքն օգտագործելը և ծառայողական պարտականությունները չկատարելը տարանջատված են միմյանցից, ինչը վկայում է այն մասին, որ օրենսդիրը անգործությամբ դրսևորվող արարքը չի ընդգրկում «օգտագործել» հասկացության մեջ, այսինքն՝ որպես այդպիսին դիտում է միայն ծառայության շահերին հակառակ կատարվող գործողությունը: Այսպիսով, ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածի շարադրանքը տառացի մեկնաբանելիս և պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հանցակազմի հետ համեմատական վերլուծության ենթարկելիս կարելի է հանգել այն հետևության, որ կազմակերպության շահերին հակասող անգործությունը դուրս է մնում տվյալ հոդվածի ներգործության ոլորտից: Գտնում ենք, որ դա արդարացված չէ, քանի որ, ինչպես նշվել է, առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելուց խուսափելը ոչ պակաս վտանգ է ներկայացնում օրենքով պաշտպանվող շահերի համար, քան նույն անձի կողմից իր լիազորություններն իրականացնելիս

կազմակերպության շահերին հակառակ կատարվող ակտիվ գործողությունը: Ընդ որում, դատական պրակտիկան ցույց է տալիս, որ որոշ դեպքերում որպես լիազորությունների չարաշահում գնահատվում է նաև համապատասխան սուբյեկտների կողմից դրսևորվող անգործությունը: Օրինակ՝ «Ալ Միլ Ստեֆ» ՍՊԸ-ի սնանկության կառավարիչ Ա.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածի 1-ին մասով՝ այն արարքի համար, որ նշված ընկերության սնանկ ճանաչվելուց հետո նա դրսևորել է անգործություն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ, պարտապանի ֆինանսական վիճակի մասին վերլուծություններում դիտավորությամբ տեղեկություններ չի ընդգրկել սնանկության պատճառների մասին, բացի դա, կանխամտածված չի դիմել դատարան՝ պարտապանի կատարած անհատույց փոխանցումները դատական կարգով հետ ստանալու համար, ինչի հետևանքով պետության օրինական շահերին պատճառվել է էական վնաս՝ 3.494.000 ՀՀ դրամի գույքային վնաս (քրեական գործ թիվ ԵԷԴ/0002/01/11):

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 17.02.2012թ. դատավճռով Ա.-ին ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ ճանաչեց անմեղ և արդարացրեց արարքում հանցակազմի բացակայության հիմքով, քանի որ դատաքննությամբ ապացուցվել է, որ նա կատարել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքից բխող անհրաժեշտ գործողությունները:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածը կիրառելիս հնարավոր տարակարծությունը բացառելու նպատակով ավելորդ չէր լինի հստակեցնել տվյալ արարքի օբյեկտիվ կողմի օրենսդրական նկարագրությունը՝ նշելով նաև անգործությամբ դրսևորվող լիազորությունները չարաշահելու, այն է՝ համապատասխան սուբյեկտի վրա դրված պարտականությունը չկատարելու մասին:

Անդրադառնալով առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու օբյեկտիվ կողմը բնութագրող գործողությունների (անգործության) բովանդակությանը՝ պետք է նշել, որ դա պայմանավորված է համապատասխան սուբյեկտի իրավասությամբ, որպիսի հասկացությունը ներառում է օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով անձին վերապահված գործառույթների շրջանակը և իրավական հնարավորությունները, նրա առջև դրված խնդիրներն ու նպատակները, նրա վարման ներքո գտնվող առարկաների (օբյեկտների, երևույթների և գործողությունների) համակցությունը և այն լիազորությունները, որոնցով նա օժտված է վարման

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

առարկաների նկատմամբ, ինչպես նաև պատասխանատվությունը: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ իրավասությունն ավելի լայն հասկացություն է, քան լիազորությունը, որը հանդիսանում է դրա տարրերից մեկը և հեղինակների մեծամասնության կողմից բնութագրվում է որպես անձին վերապահված իրավունքների և պարտականությունների համակցություն³:

Լիազորությունները չարաշահելը կարող է արտահայտվել տարբեր կերպ, օրինակ՝ ակնհայտ անվճարունակ գործընկերներին վարկեր տրամադրելը, ակնհայտ անշահավետ այլ գործարքներ կնքելը, ծառայողական տրանսպորտային կամ այլ տեխնիկական միջոցները, սարքերը, կազմակերպությանը պատկանող այլ գույքը անձնական նպատակներով օգտագործելը, սպառողի հետ հրապարակային պայմանագիր կնքելուց կամ հանրային ծառայություններ մատուցելուց խուսափելը կամ հաճախորդներից ոմանց ուրիշների հանդեպ նախապատվություն տալը՝ նրանց համար անհիմն սահմանելով նվազ կամ ավելի բարենպաստ պայմաններ, այդ թվում՝ անհիմն բարձրացնել կամ նվազեցնել պաշտոնապես սահմանված կամ ընդունված դրույքաչափերը (օրինակ՝ ավանդների կամ վարկերի տոկոսադրույքը) և այլն: Բոլոր դեպքերում, տվյալ հանցակազմը կարող է առկա լինել միայն այն դեպքում, երբ արարքը կատարվում է կազմակերպության շահերին հակառակ: Կազմակերպության օրինական շահերի թվին կարելի է դասել հիմնադիր փաստաթղթերում ամրագրված խնդիրներն ապահովելը, կանոնադրական նպատակներին հասնելը, կազմակերպության պայմանագրային իրավահարաբերություններն արդյունավետ կարգավորելը, պայմանագրերը պատշաճ կատարելը, աշխատանքային կարգապահությունը և աշխատանքի պաշտպանությունն ապահովելը, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, աշխատանքի անվտանգության, օրենքով երաշխավորված անհրաժեշտ բարենպաստ պայմաններ ստեղծելուն ուղղված համալիր միջոցառումները մշակելն ու արդյունավետ կիրառելը: «Կազմակերպության շահ» ասելով՝ պետք է հասկանալ բացառապես օրինական շահը, որը համապատասխանում է գործող օրենսդրությանը և այլ իրավական ակտերի պահանջներին, կազմակերպության գործունեության սկզբունքներին, խնդիրներին և նպատակներին: Ընդ որում, կարծում ենք, հնարավոր չէ իրավաչափ համարել կազմակերպության որևէ շահը, եթե այն ապահովելու համար գործադրվում են անօրինական միջոցներ և եղանակներ, այդ թվում՝ կազմակերպության համար որևէ օգուտ ձեռք բերելը (շահույթ ստանալը, ծախսերից ազատվելը և այլն), եթե դա չի բխում իրավական նորմերի պահանջներից կամ տվյալ կազմակերպության գործունեության խնդիրներից և սկզբունք-

ներից: Հետևաբար, անօրինական գործողությունները (անգործությունը), որոնք թեև կատարվում են տվյալ կազմակերպության համար որոշակի օգուտներ ձեռք բերելու նպատակով, չեն կարող դիտվել որպես կազմակերպության շահերի ապահովմանն ուղղված: Այդպիսի արարքները նույնպես հակասում են կազմակերպության շահերին՝ նկատի ունենալով դրանց ապօրինի բնույթը: Այդ առումով արդարացված չէ որոշ քրեագետների կողմից պաշտպանվող այն տեսակետը, ըստ որի՝ կազմակերպության շահերին հակառակ լիազորություններն օգտագործելու մասին օրենքում նշվող նեղացում է քրեական պատասխանատվության դաշտը, քանի որ դրանով սահմանափակվում է վերլուծվող նորմի կիրառման ոլորտը: Այդպիսի մոտեցման կողմնակիցների կարծիքով, այն չի ընդգրկում այնպիսի դեպքերը, երբ ծառայողը ապօրինաբար գործում է ի շահ կազմակերպությանը կամ երբ վնաս է պատճառում ոչ թե իր, այլ մեկ այլ կազմակերպությանը⁴: Մեր կարծիքով, անիրավաչափ գործողությունները հնարավոր չէ համատեղել կազմակերպության օրինական շահերի հետ: Ապօրինի շահերի բավարարմանն ուղղված ցանկացած արարք պետք է դիտվի որպես կազմակերպության շահերին հակառակ կատարված, անգամ, եթե դրա արդյունքում վերջինս ստացել է որոշակի օգուտ:

Դեռևս խորհրդային քրեական իրավունքի տեսության մեջ վիճելի էր այն հարցը, թե արդյո՞ք լիազորությունները չարաշահելու օբյեկտիվ կողմը բնութագրող գործողությունները պետք է սահմանափակված լինեն անձի անմիջական լիազորությունների շրջանակով, թե՞ դրանց չարաշահումը պետք է մեկնաբանվի լայն իմաստով՝ ներառելով նաև իր զբաղեցրած դիրքի հեղինակությունը, ծառայողական կապերը և դրանից բխող հնարավորություններն օգտագործելը: Ըստ լայն իմաստով մեկնաբանման կողմնակիցների՝ ծառայողական դիրքը չարաշահելու տակ պետք է հասկանալ նաև այնպիսի գործողությունները, որոնք անմիջականորեն կապված չեն անձի ծառայողական պարտականությունների հետ, այլ հիմնված են նրա պաշտոնի, հեղինակության, ծառայողական կապերի վրա: Այսինքն՝ ծառայողական դիրքը ընդգրկում է ոչ միայն անձի լիազորությունները, նրա իրավական հնարավորությունները, այլև գործողություններ կատարելու փաստացի հնարավորությունը, որը կանխորոշվում, պայմանավորվում է զբաղեցրած պաշտոնով, բայց ոչ մեղավորի անձնական սուբյեկտիվ հատկանիշներով:

Տվյալ հարցի վերաբերյալ նեղ իմաստով մեկնաբանության վրա հիմնված դիրքորոշման կողմնակիցները որպես ծառայողական դիրքի օգտագործում դիտում էին միայն այն գործողությունները կամ անգործությունը, որոնք կատարվում էին միայն լիազորությունների (իրավասության) սահ-

մաններում, անձի իրավունքների և պարտականությունների շրջանակներում: Վերջիններս չէին դիտարկում հեղինակության և ծառայողական կապերի օգտագործումը որպես ծառայողական դիրքի օգտագործում⁶: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ ուսումնասիրվող արարքի դիսպոզիցիայում, ի տարբերություն պաշտոնական լիազորությունները չարաշահելու հանցակազմի, հստակ նշվում է լիազորությունները, այլ ոչ թե ծառայողական դիրքը օգտագործելու մասին: Վերոգրյալից բխում է, որ տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը չի ընդգրկում զբաղեցրած պաշտոնի հեղինակությունը և ծառայողական կապերն օգտագործելը: Այսպիսով, ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածով նախատեսված արարքի ներկայիս օրենսդրական ձևակերպումը բացառում է լիազորությունները չարաշահելու օբյեկտիվ կողմը բնութագրող գործողությունների (անգործության) բովանդակության լայն իմաստով մեկնաբանումը: Կարծում ենք, որ նման սահմանափակումը հիմնավոր չէ, քանի որ անհիմն նեղացնում է վերը նշված նորմի գործողության ոլորտը: Ինչպես իրավագիտորեն նշում է Ս. Ա. Գորդեյչիկը. «Հեղինակությունն ու կապերը կարելի է օգտագործել ինչպես ի օգուտ, այնպես էլ ի վնաս իրավունքով պաշտպանվող շահերի: Վերջինս չպետք է քրեաիրավական ներգործության ոլորտից դուրս մնա»:

Կարծում ենք, որ ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածի գործողությունը պետք է տարածել ոչ միայն համապատասխան սուբյեկտի անմիջական լիազորությունների, այլև նրա ծառայողական կապերի կամ զբաղեցրած պաշտոնի հեղինակության օգտագործմամբ զուգորդված այնպիսի արարքների վրա, որոնք կապված են ծառայության բերումով այդ անձին վերապահված իրավունքների և լիազորությունների հետ: Նշված դեպքերում այլ ծառայողների վրա գործադրվող ազդեցությունը, պաշտոնի հեղինակության կամ ծառայողական կապերի օգտագործումը պետք է համարվի ծառայողական դիրքի անիրավաչափ օգտագործման տարր: Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ այդպիսի գործողությունները կապված չեն ծառայողական հարաբերությունների հետ, ապա դա չի կարող դիտվել որպես ծառայողական դիրքի չարաշահում:

Այսպիսով, գտնում ենք, որ նպատակահարմար կլիներ փոփոխություն կատարել ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածի դիսպոզիցիայում՝ նշելով նաև գրաված դիրքն օգտագործելու մասին:

Կազմակերպության շահերին հակասող արարք կատարելիս համապատասխան սուբյեկտը գործում է իր իրավասության շրջանակում, սակայն որոշ դեպքերում կարող է անցնել այդ սահմանները: Հատուկ ուշադրության են արժանի այն դեպքերը, երբ առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողի գործողություններն ակնհայտորեն

դուրս են գալիս իրեն վերապահված լիազորությունների շրջանակից: Հարց է առաջանում, թե արդյո՞ք այդպիսի արարքները կարելի է դիտել որպես լիազորությունների չարաշահում՝ որակելով այն ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածով:

Իրավաբանական գրականության մեջ լիազորություններն անցնելը օբյեկտիվ կողմից բնութագրվում է որպես այնպիսի գործողություններ կատարելը, որոնք՝ ա) որևէ անձ իրավասու չէ կատարելու ոչ մի պարագայում, բ) մտնում են այլ անձի (տվյալ կամ ուրիշ կազմակերպության ծառայողի) իրավասության մեջ կամ պահանջում կոլեգիալ լուծում, գ) կարող են կատարվել համապատասխան անձի կողմից միայն որոշակի պայմանների առկայության դեպքում:

Այսպիսով, լիազորություններն անցնելը իր բովանդակությամբ չի նույնանում լիազորությունները չարաշահելու հետ, որի դեպքում արարքի օբյեկտիվ կողմը բնութագրող գործողությունները թեև հանրորեն վտանգավոր և հակաօրինական են (հակասում են օրենքի կամ այլ իրավական ակտի պահանջներին, կազմակերպության գործունեության սկզբունքներին և նպատակներին, դրա առջև դրված խնդիրներին, կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման կարգին), սակայն ձևականորեն մտնում են անձի ծառայողական իրավասության մեջ: Այն տարբերվում է նաև լայն իմաստով մեկնաբանվող ծառայողական դիրքի չարաշահման օբյեկտիվ կողմը բնութագրող գործողություններից, որոնք ծառայողի անմիջական լիազորություններն իրականացնելուց բացի ենթադրում են նաև ծառայողական կապերի և զբաղեցրած պաշտոնի հեղինակությունն օգտագործելը, որը հնարավորություն է ընձեռում համապատասխան սուբյեկտին ներգործել այլ անձանց վարքագծի և նրանց կողմից ընդունվող որոշումների վրա:

Այդ հարցի կապակցությամբ քրեական իրավունքի տեսության մեջ միասնական մոտեցում ձևավորված չէ: Այսպես, Բ. Վ. Վոլժենկինը գտնում է, որ առևտրային և այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորություններն անցնելը հանդիսանում է լիազորությունները չարաշահելու մասնավոր դեպք: Հեղինակի կարծիքով, օրենքում հատուկ նորմի բացակայությունը չի բացառում ընդհանուր բնույթի նորմով՝ լիազորությունները չարաշահելու հանցակազմը նախատեսող քրեական օրենսգրքի հոդվածով, քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը: Նման տեսակետը, մեր կարծիքով, ընդունելի չէ, քանի որ տվյալ հանցանքները չեն նույնանում: Քրեական իրավունքի տեսության մեջ այդ երկու տեսակի արարքները սահմանազատվում են միմյանցից, տարբերվում իրենց օբյեկտիվ կողմի առանձնահատկություններով՝ նկատի ունենալով, որ դրանք բնութագրող գործողությունները իրենց բովանդա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կուրսամբ տարբեր են: Վերոգրյալը հիմք ընդունելով՝ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններն ընդգրկող 29-րդ գլխում օրենսդիրն այդ երկու տեսակի արարքները նախատեսել է առանձին հոդվածներում (հոդված 308-րդ «Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը» և հոդված 309-րդ «Պաշտոնեական լիազորություններն անցնելը»): Հետևաբար, լիազորությունները չարաշահելու տարածական մեկնաբանումը կհանգեցնի «չարաշահել» հասկացության իմաստի սխալ ըմբռնմանը և դրա բովանդակության անհիմն ընդլայնմանը: Վերոգրյալը կարող է խնդիրներ առաջացնել առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից կազմակերպության շահերին հակառակ կատարված արարքները որակելիս: Այսպես, ո՛չ լիազորությունները չարաշահելու, ո՛չ էլ դրանք անցնելու հասկացությունները օրենսդրորեն ամրագրված չեն և որոշվում են միայն տեսությամբ (որտեղ այդ երկու հասկացությունները տարբերակվում են): Հետևաբար, մնան մեկնաբանումը հնարավորություն չի ընձեռի հստակ որոշել ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածի ներգործության սահմանները քրեական իրավունքի տեսության մեջ մշակված հասկացությունների հիման վրա՝ վերջիններիս հակասելու պատճառով: Գտնում ենք, որ ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածի գործողությունը լիազորությունների սահմանազանցմամբ դրսևորվող արարքների վրա տարածելը կհանգեցնի քրեական օրենքն անալոգիայով կիրառելուն, ինչն արգելվում է:

Այսպիսով, կարծում ենք, որ օրենքում առկա է բաց, որն անհրաժեշտ է վերացնել: Այդ իսկ պատճառով նպատակահարմար կլիներ լրացնել ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածի դիսպոզիցիան՝ 1-ին մասում նշում կատարելով նաև լիազորություններն անցնելու վերաբերյալ, ինչը թույլ կտա ընդգրկել տվյալ նորմի ներգործության ոլորտում առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից կատարվող հանրության համար վտանգավոր արարքների լայն շրջանակը՝ ներառյալ համապատասխան սուբյեկտի իրավասության մեջ մտնող և իր լիազորությունների սահմաններից ակնհայտորեն դուրս եկող գործողությունները:

Ընդ որում, պետք է փաստել, որ մասնավոր հատվածի ծառայության ոլորտում կատարվող հանցագործությունների վերաբերյալ ՀՀ գործող քրեական օրենսդրության բացերը վերոգրյալով չեն սահմանափակվում: Այդ թվում՝ օրենսդրական լուծում չի տրվել համապատասխան սուբյեկտների կողմից կատարվող ծառայողական կեղծիքի խնդրին: Այդ հարցի կապակցությամբ հետաքրքրություն է ներկայացնում ստորև բերվող օրինակը:

ՀՀ Գլխավոր դատախազության քննչական վարչությունում 2004-2005թթ. քննվել է թիվ 62205705 քրեական գործ, որի շրջանակներում «X»

ՓԲԸ-ի տնօրեն Ա.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր.-ի 314-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա «Y» ՓԲԸ-ի տնօրեն Վ.-ի հետ միասին հետին թվով կազմել, ստորագրել ու կնքել է կեղծ համաձայնագիր, ըստ որի՝ «X» ՓԲԸ-ն «Y» ՓԲԸ-ի պատվերը կատարելիս իբրև կրել է լրացուցիչ չնախատեսված ծախսեր, որի հետևանքով նրա մոտ առաջացել են առանձնապես խոշոր չափի վնասներ, իսկ «Y» ՓԲԸ-ն ընդունել է նշված ծախսերը և պարտավորվել է փոխհատուցել այն: Նույն մեղադրանքը առաջադրվել է նաև «Y» ՓԲԸ-ի տնօրեն Վ.-ին: Այնուհետև մեղադրյալների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է քրեական գործի վարույթը կարճվել է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու կապակցությամբ:

Անդրադառնալով վերոնշյալ արարքի որակմանը՝ հարկ է նշել, որ մեղադրյալները հանդիսանում էին առևտրային կազմակերպություններում կառավարչական լիազորություններն իրականացնող ծառայողներ և օժտված չէին ՀՀ քր. օր.-ի 308-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պաշտոնատար անձի հատկանիշներով: Հետևաբար, վերջիններս չէին կարող հանդես գալ որպես ՀՀ քր. օր.-ի 314-րդ հոդվածով նախատեսված հանցագործության՝ պաշտոնեական կեղծիքի սուբյեկտ: Այդ կապակցությամբ հարց է առաջանում, թե կարո՞ղ էր արդյոք տվյալ արարքը որակվել ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածով: Մեր կարծիքով, դա սխալ կլիներ հետևյալ պատճառաբանությամբ. ինչպես արդեն նշվել է, ծառայողական լիազորությունները կազմակերպության շահերին հակառակ օգտագործելիս անձը գործում է իր իրավասության սահմաններում, այսինքն՝ օգտվում է իրավական ակտերից բխող, իրեն պատկանող իրական իրավագործություններից: Այդպիսին է, օրինակ, օրենքի պահանջների հիման վրա մշակված կանոնադրությամբ նախատեսված՝ ընկերության ամունից գործարք կնքելու լիազորությունը, որը վերապահվում է տվյալ կազմակերպության գործադիր մարմնին (տնօրենին կամ կոլեգիալ գործադիր մարմնին): Ընդ որում, այստեղ խոսքը վերաբերում է օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով գործարքի կնքմանը՝ դրա ձևին և բովանդակությանը առաջադրվող պարտադիր պայմանների պահպանմամբ (այլ հարց է, որ դրա կնքումը տվյալ պարագայում կարող է ընկերության համար նպատակահարմար չլինել): Մինչդեռ բերված օրինակում տեղի է ունեցել ոչ թե իրական գործարքի կնքում՝ տվյալ հասկացության իրավաբանական իմաստով, այլ պատրաստվել է իրականում գոյություն չունեցող փաստերը հաստատող շինծու փաստաթուղթ: Անկասկած պարզ է, որ փաստաթուղթ կեղծելու լիազորությունը չի կարող մտնել որևէ անձի իրավասության մեջ: Բացի այդ, այդպիսի

www.lawinstitute.am

արարքը դժվար թե կարելի է դիտել որպես լիազորություններն անցնելը, որն ըստ էության, իրենից ներկայացնում է սահմանված կարգի խախտմամբ ծառայողական գործառնություններն իրականացնելը՝ զուգորդված տվյալ սուբյեկտի իրավասության շրջանակից ակնհայտորեն դուրս եկող գործողությունների կատարմամբ: Լիազորությունների սահմանազանցման մասին կարելի է խոսել, օրինակ՝ ընկերության ղեկավարի կողմից առանց կառավարման վերահաս մարմնի (տնօրենների խորհրդի, բաժնետերերի ընդհանուր ժողովի) թույլտվության գործարք կնքելու դեպքում, եթե օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով այդպիսի թույլտվությունը (գործարքին հավանություն տալը) պարտադիր է: Մինչդեռ փաստաթղթերի կեղծումը գտնվում է բոլորովին այլ հարթության վրա և անգամ մոտ չի կարող լինել որևէ անձի ծառայողական իրավասության շրջանակին: Կեղծիքի օբյեկտիվ կողմը բնութագրող գործողություններն ունեն յուրահատուկ բովանդակություն, այդ տեսակի արարքներին բնորոշ առանձնահատկություններ, որի ուժով ձեռք են բերում ինքնուրույն քրեաիրավական նշանակություն: Անշուշտ, կարելի է ասել, որ ծառայողական գործունեության ոլորտում կատարվող, համապատասխան սուբյեկտների գրաված դիրքի հետ կապված բազմազան և բազմատեսակ բոլոր արարքները լայն իմաստով մեկնաբանելիս իրենից ներկայացնում են լիազորությունների (դիրքի) չարաշահում՝ նկատի ունենալով, որ դրանք բոլորը կապված են լիազորությունների կամ գրաված դիրքից բխող հնարավորությունների ոչ իրավաչափ օգտագործման հետ: Չարաշահման հասկացության այդպիսի տարածական մեկնաբանության դեպքում դրան կարելի է վերագրել ոչ միայն լիազորությունների սահմանազանցումը, այլև կեղծիքը և նույնիսկ կաշառումը: Լիազորությունները չարաշահելու համար քրեական պատասխանատվություն սահմանող նորմը հանդես է գալիս որպես ընդհանուր՝ ծառայողական գործունեության հետ կապված հանցանքների առանձին տեսակները նախատեսող հատուկ նորմերի նկատմամբ: Ակնհայտ է և անվիճելի, որ ծառայողական չարաշահումների բոլոր հնարավոր դրսևորումների նկարագրությունը անհնար է առանձին նախատեսել քրեական օրենքում՝ նկատի ունենալով, որ դրանք կարող են լինել բազմատեսակ, և, բացի այդ, դրա անհրաժեշտությունը բացակայում է՝ հիմք ընդունելով ընդհանուր նորմի առկայությունը: Սակայն, մյուս կողմից, հնարավոր չէ նաև սահմանել մեկ «ունիվերսալ» նորմ՝ տարածելով դրա գործողությունը համապատասխան ոլորտում կատարվող տարատեսակ արարքների չափազանց լայն շրջանակի վրա, անտեսելով դրանց որոշ խմբերի յուրահատկությունը: Այսպես, օրինակ, օրենսդիրը սահմանել է առևտրային կաշառքի համար քրեական պատասխանատվու-

թյուն նախատեսող առանձին նորմ՝ նպատակահարմար գտնելով տարբերակել տվյալ տեսակի արարքները առևտրային և այլ կազմակերպությունների ծառայողների կողմից կատարվող այլ հանցավոր չարաշահումներից, ինչը, կարծում ենք, ամբողջությամբ արդարացված է և հիմնավոր: Մինչդեռ համապատասխան սուբյեկտների կողմից կատարվող ծառայողական կեղծիքի յուրահատուկ բովանդակությունը, մեր կարծիքով, անտեսվել է:

Գտնում ենք, որ վերը շարադրված պատճառաբանությամբ սխալ կլիներ նույնացնել կեղծիքը լիազորությունները չարաշահելու հետ (թե՛ լայն և թե՛ մեղ իմաստով), չնայած այն հանգամանքին, որ բերված օրինակում դա կատարվել է մեղադրյալների ծառայողական դիրքից բխող հնարավորությունների օգտագործմամբ:

Այդ կապակցությամբ հարց է առաջանում, թե առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողների կողմից կատարվող կեղծիքի քրեականացումը արդյո՞ք չի հանգեցնի ՀՀ քր. օր.-ի Հատուկ մասի նորմերի ավելորդ կրկնությանը՝ նկատի ունենալով ՀՀ քր. օր.-ի 314-րդ և 325-րդ հոդվածների առկայությունը: Կարծում ենք՝ ոչ, քանի որ, նույն տրամաբանությունից ելնելով, կարելի է ավելորդ համարել նաև ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածի գոյությունը: Այսպես, գործողության մեջ դնելով 2003թ.-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը, օրենսդիրը քրեաիրավական պաշտպանության տակ է դրել նաև հասարակական հարաբերությունների մի նոր տեսակ, այն է՝ հանրային ոլորտում չընդգրկված կազմակերպություններում ծառայության շահերը՝ ճանաչելով տվյալ օբյեկտի կարևորությունը և դրանով պայմանավորված՝ այն քրեաիրավական միջոցներով պաշտպանելու անհրաժեշտությունը: Միաժամանակ, օրենսդիրը, որդեգրելով ԱՊՀ երկրների մոդելային քրեական օրենսգրքում արտացոլված սկզբունքը, ընտրել է հանրային և մասնավոր հատվածների ծառայողների հանցավոր արարքների սահմանազանցման ուղին՝ ճանաչելով այդ երկու կատեգորիայի արարքների օբյեկտների տարբերությունը: Նման պարագաներում, հիմք ընդունելով հանրային և ոչ հանրային ծառայության ոլորտում կատարվող արարքներին բնորոշ ընդհանուր հատկանիշների նմանությունը, դրանք նախատեսող ՀՀ քր. օր.-ի Հատուկ մասի տարբեր գլուխներում տեղադրված նորմերն անխուսափելիորեն նման կլինեն իրենց իրավաբանական-տեխնիկական կառուցվածքով, ինչպես, օրինակ, ՀՀ քր. օր.-ի 214-րդ և 308-րդ հոդվածները (ընդ որում, դա բոլորովին չի նշանակում, որ դրանք պետք է տառացիորեն վերարտադրեն միմյանց): Անդրադառնալով կեղծիք կատարած ոչ հանրային ոլորտի ծառայողին լիազորությունները չարաշահելու համար քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությանը՝ հարց է առաջա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նում, թե ինչո՞վ էր ղեկավարվում օրենսդիրը՝ սահմանելով պաշտոնեական կեղծիքի համար քրեական պատասխանատվություն նախատեսող առանձին նորմ (314-րդ հոդված): Ակնհայտ է, որ դա պայմանավորված է տվյալ տեսակի արարքներին բնորոշ առանձնահատկությամբ, որը թույլ չի տալիս ընդգրկել դրանք ընդհանուր նորմի (308-րդ հոդվածի) գործողության ոլորտում՝ նույնացնելով լիազորությունները չարաշահելու հետ: Հիմք ընդունելով դա, հասկանալի չէ օրենսդրի մոտեցումը առևտրային և այլ կազմակերպությունների ծառայողների նմանատիպ արարքների նկատմամբ, որոնք նույնպես վտանգ են ներկայացնում օրենքով պաշտպանվող շահերի համար:

Այսպիսով, ակնհայտ է, որ առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողի կողմից ցանկացած եղանակով կատարված կեղծիքը՝ կազմակերպության գործունեությանը առնչվող կեղծ փաստաթղթեր կազմելը կամ հանձնելը, այդպիսի փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ գրառումներ մտցնելը, կեղծում, քերվածք կամ այլ թվական գրառումներ կամ փոփոխություններ կատարելը, ինչպես նաև նմանատիպ այլ գործողությունները չեն համապատասխանում ոչ լիազորությունների չարաշահման, ոչ էլ սահմանազանցման հատկանիշներին: Նման արարքները չեն կարող ամբողջությամբ ընդգրկվել նաև ՀՀ քր. օր.-ի 325-րդ հոդվածի գործողության ոլորտում, քանի որ միայն մասնակիորեն են համապատասխանում նշված հոդվածով նախատեսված հանցանքների օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներին: Այսպես, ծառայողական կեղծիքը կարող է ընդգրկել հանցագործության առարկաների ավելի լայն շրջանակ, որը չի սահմանափակվում վերոնշյալ հոդվածում թվարկված փաստաթղթերով: Նույնը վերաբերում է նաև արարքի սուբյեկտիվ կողմին՝ նկատի ունենալով ՀՀ քր. օր.-ի 325-րդ հոդվածում ամրագրված նպատակները: Բացի այդ, տվյալ դեպքում կանտեսվի և քրեաիրավական գնահատական չի ստանա այդ արարքների սոցիալական էությունն արտացոլող այնպիսի կարևոր հատկանիշը, ինչպիսին է համապատասխան կազմակերպություններում ծառայության շահերի դեմ ուղղված լինելը, այսինքն՝ դրանց օբյեկտիվ յուրահատկությունը:

Շոշափելով մասնավոր հատվածի ծառայողների կողմից կատարվող կեղծիքի քրեականացման խնդիրը՝ չենք կարող չանդրադառնալ նաև այն հարցին, թե ծառայողական կեղծիքի համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմի առկայությունը արդյո՞ք չի հանգեցնի իրավական կոլիզիայի վերջինիս և ՀՀ քր. օր.-ի 189-րդ հոդվածի (կեղծ ձեռնարկատիրություն) 2-րդ մասի միջև: Այսպես, վերոհիշյալ հոդվածի 2-րդ մասում նկարագրված արարքը օբյեկտիվ կողմից բնութագրվում է որպես առանց ապրանքների մատակարար-

ման կամ առանց ծառայությունների մատուցման կեղծ փաստաթղթեր տրամադրելը, ծախսերի կամ եկամուտների վերաբերյալ կեղծ փաստաթղթեր կազմելը և ներկայացնելը, որը խոշոր վնաս է պատճառել: Չանդրադառնալով տվյալ նորմի գոյությունը հիմնավոր կամ ոչ հիմնավոր լինելու հարցին՝ այնուհանդերձ հարկ ենք համարում դիտարկել դա ծառայողական կեղծիքի դեպքերին վերաբերելիության տեսանկյունից: Եթե անգամ համարենք, որ այն կարող է տարածվել բերված օրինակի վրա (ինչը բոլոր դեպքերում վիճելի է), ապա հարց է առաջանում, թե ինչպե՞ս պետք է վարվել ՀՀ քր. օր.-ի 189-րդ հոդվածի 2-րդ մասում չնշված այլ փաստաթղթերը, օրինակ՝ կազմակերպության կառավարման մարմինների (բաժնետերերի ընդհանուր ժողովի, տնօրենների խորհրդի, կոլեգիալ գործադիր մարմնի և այլնի) որոշումները այդպիսի մարմինների կազմում ընդգրկված անձի կամ այլ ծառայողի կողմից կեղծելու դեպքում: Նույն խնդիրը կառաջանա նաև առևտրային կամ այլ կազմակերպություններում որևէ պաշտոն զբաղեցնելու կամ աշխատավարձի չափի մասին կեղծ տեղեկություններ պարունակող տեղեկանք կամ այլ փաստաթուղթ տրամադրելու դեպքին իրավաբանական գնահատական տալու ժամանակ: Այսպիսով, կարծում ենք, որ ՀՀ քր. օր.-ի 189-րդ հոդվածի 2-րդ մասը ի վիճակի չէ լրացնելու քրեական օրենքում առկա բացը, քանի որ դրա գործողությունը տարածվում է միայն կեղծիքի հետ գույքորված դեպքերի որոշակի նեղ շրջանակի վրա (նույնը կարելի է ասել նաև ՀՀ քր. օր.-ի 325-րդ հոդվածի մասին), և բացի այդ՝ ծառայողական կեղծիքը կարող է ընդհանրապես չառնչվել ձեռնարկատիրական գործունեության հետ: Այլ հարց է, թե առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողի կողմից կատարվող ծառայողական կեղծիքը նախատեսող առանձին նորմի առկայության պայմաններում արդյո՞ք անհրաժեշտ կլինի ՀՀ քր. օր.-ի 189-րդ հոդվածի 2-րդ մասը՝ ներկայիս գործող խմբագրությամբ, որպիսի հարցին չենք անդրադառնում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ նշված օրենսդրական բացը շտկման կարիք ունի, ուստի նպատակահարմար կլիներ նախատեսել համապատասխան սուբյեկտի քրեական պատասխանատվությունը կեղծիքի համար, եթե դա էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների, հասարակության կամ պետության իրավունքներին ու օրինական շահերին:

ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ են հանդիսանում հանրորեն վտանգավոր հետևանքները՝ անձանց, կազմակերպությունների կամ պետության իրավունքներին ու օրինական շահերին պատճառված էական վնասը: Վնասը կարող է կրել գույքային կամ ոչ գույքային

www.lawinstitute.am

բնույթ, այդ թվում՝ կազմակերպչական, ֆիզիկական, բարոյական: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ, որոշ հեղինակների կարծիքով, ոչ գույքային վնասը չի կարող համարվել լիազորությունները չարաշահելու հետևանք, քանի որ դա հանգեցնում է քրեական և քաղաքացիաիրավական պատասխանատվության միջև առկա սահմանագծի վերացմանը¹⁰: Գտնում ենք, որ նման տեսակետը հիմնադրվել է՝ նկատի ունենալով նախ այն, որ գույքային վնասի շուրջ ծավալվող իրավահարաբերությունները որոշ դեպքերում նույնպես կարող են կարգավորվել քաղաքացիաիրավական դաշտում, և, բացի այդ, նման սահմանափակ մեկնաբանումը չի բխում լիազորությունները չարաշահելու հետևանքների օրենսդրական նկարագրությունից:

Լիազորությունների չարաշահման հետևանքով պատճառվող վնասը կարող է արտահայտվել տարբեր կերպ, օրինակ՝ աշխատատեղերի կրճատման, աշխատավարձի չվճարման, հարկման բազայի նվազեցման, սնանկության վտանգի ստեղծման, կազմակերպության շահութաբերության նվազման, թողարկվող արտադրանքի կրճատման, երկարատև արտադրական պարապորդի, կազմակերպության բնականոն գործունեության այլ խանգարումների, կազմակերպության կամ նրա գործընկերների տնտեսական վիճակի կամ աշխատանքի պայմանների վատթարացման, գործարար համբավի վարկաբեկման, քաղաքացիների սահմանադրական իրավունքների խախտման, կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի և այլ ձևերով:

Գույքային վնասը կարող է դրսևորվել գույքի ոչնչացման, վնասման, կորստի (իրական վնաս), չստացված եկամուտների (բաց թողնված օգուտի), ինչպես նաև այն ծախսերի տեսքով, որոնք տուժողը կատարել է կամ պետք է կատարի իր խախտված իրավունքը վերականգնելու համար: Այդպիսի վնասը կարող է արտահայտվել մատուցվող ծառայությունների դիմաց լրացուցիչ վճարումներ գանձելու, կատարված աշխատանքների կամ մատուցված ծառայությունների, վաճառված գույքի դիմաց կազմակերպությանը հասանելիք դրամական միջոցները պակաս չափով ստանալու մեջ: Հարկ է նշել, որ ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածով նախատեսված էական վնասը արժեքավորվող հասկացություն է, հետևաբար յուրաքանչյուր դեպքում վնասի էական լինելու հարցը որոշելիս պետք է հաշվի առնվեն գործի կոնկրետ հանգամանքները (արարքի բացասական ազդեցության աստիճանը կազմակերպության բնականոն աշխատանքի վրա, դրա կողմից կրած նյութական վնասի բնույթը և չափը, տուժած քաղաքացիների քանակը, նրանց պատճառված ֆիզիկական, բարոյական կամ գույքային վնասի ծանրությունը և այլն)¹¹:

Լիազորությունները չարաշահելու

հետևանքները որոշելիս արժեքավորվող հասկացությունների կիրառման հարցի կապակցությամբ քրեագետների կարծիքները տարբեր են: Այսպես, Ն. Լուպաշենկոն գտնում է, որ մի շարք դեպքերում հանցակազմերը նկարագրելիս այնպիսի կատեգորիաների կիրառումը, ինչպիսիք են «էական վնասը» և «ծանր հետևանքները», պարզապես անհրաժեշտ է՝ այս կամ այն հանրության համար վտանգավոր վարքագծի կամ դրա որևէ բնորոշումների գործնականում առկա բոլոր դրսևորումները օրենքում նախատեսելու անհնարինության կապակցությամբ¹²: Հակառակ տեսակետի կողմնակիցների կարծիքով, հետևանքների անորոշությունը գործնականում հանգեցնում է բարդությունների առաջացմանը¹³: Մեր կարծիքով, նշված մոտեցումներից յուրաքանչյուրի հետ կարելի է համաձայնել միայն մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

Հարկ է նշել, որ, ի տարբերություն պաշտոնական լիազորությունները չարաշահելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող ՀՀ քր. օր.-ի 308-րդ հոդվածի (որտեղ գույքային վնասի դեպքում էական է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը), ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածում առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողի կողմից լիազորությունները չարաշահելու հետևանքով պատճառված էական գույքային վնասի չափը որոշված չէ: Կարծում ենք, որ դա օրենսդրի բացթողումն է, քանի որ այդպիսի տարբեր մոտեցումը հանրային և ոչ հանրային ոլորտի ծառայողների հանցավոր արարքներով պատճառված վնասի նկատմամբ անտրամաբանական է և ոչ հիմնավոր: Ինչպես հայտնի է, արժեքավորվող հասկացությունների մեկնաբանումը, պայմանավորված լինելով գործի հանգամանքներով, զգալի չափով կախված է իրավակիրառողի սուբյեկտիվ ընկալումից: Շատ դեպքերում, հատկապես օրենքի միատեսակ կիրառության վերաբերյալ դատական պրակտիկայի կողմից հստակ ձևավորված միասնական մոտեցման բացակայության պայմաններում, արժեքավորվող հասկացություններով որոշվող հանգամանքների գնահատումը կարող է չափազանց դժվար լինել: Մինչդեռ ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածը կիրառելիս վնասը որպես էական գնահատելը վճռորոշ դեր է խաղում ծառայության բնագավառում կատարվող հանցավոր արարքները այլ զանցանքից սահմանազատելու համար, քանի որ դրանից կախված է արարքում հանցակազմի առկայության հարցը:

Օրենքում հստակ որոշված չափանիշների բացակայության պայմաններում այդպիսի կարևոր հարցի լուծումն ամբողջությամբ իրավակիրառողի հայեցողությանը թողնելը, կարծում ենք, ճիշտ չէ: Իհարկե, հասկանալի է, որ որոշ դեպքե-

րում քրեական օրենքում արժեքավորվող հասկացություններ օգտագործելն անխուսափելի է, օրինակ՝ նույն արարքով պատճառված ոչ գույքային բնույթի վնասը որպես էական գնահատելիս: Նման դեպքերի առնչությամբ արժեքավորվող հասկացությունների կիրառման օգտին քրեագետների արտահայտած կարծիքները հիմնավոր են թվում: Սակայն, մեր համոզմամբ, այդպիսի հասկացությունների կիրառումը պետք է սահմանափակվի այն դեպքերով, երբ անհնար է գնահատել պատճառված վնասի ծանրությունը դրամային արտահայտությամբ: Պարզ է, որ առանձին դեպքերում, հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները (օրինակ՝ տուժողի գույքային դրությունը, նրա խնամքի տակ գտնվող անձանց թիվը), դրամային արտահայտությամբ նույն գումարի չափով պատճառված վնասը կարող է լինել ավելի կամ նվազ ծանր այն կրած անձի համար: Սակայն, այդպիսի մոտեցման դեպքում դրամային արտահայտությամբ որոշվող չափ չպետք է սահմանվեր նաև սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված մի շարք հանցագործությունների, ինչպես նաև ՀՀ քր. օր.-ի 308-րդ հոդվածով նախատեսված արարքի հետևանքների համար, ինչը, մեր կարծիքով, անխուսափելիորեն կխոչընդոտեր օրենքի միատեսակ կիրառությանը: Բոլոր դեպքերում համոզված ենք, որ առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողի արարքով պատճառված գույքային վնասն էական համարելու համար կոնկրետ քանակական չափանիշ սահմանելը նախընտրելի է ներկայիս անորոշ օրենսդրական ձևակերպման համեմատ: Հետևաբար, գտնում ենք, որ արդարացված կլիներ լրացնել ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածով նախատեսված արարքի օրենսդրական ձևակերպումը՝ սահմանելով հանցագործությամբ պատճառվող գույքային վնասի կոնկրետ չափ:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածում թվարկվող, հանցագործության հետևանքով խախտվող շահերի շրջանակում ներառված չեն հասարակության շահերը (դրանք նշված են ի թիվս ՀՀ քր. օր.-ի 308-րդ հոդ-

վածում նկարագրված հետևանքների): Ընդ որում, «հասարակության շահ» հասկացությունը ունի ինքնուրույն իրավաբանական նշանակություն, որը պետք է տարբերել և՛ պետական շահից, և՛ անձի կամ կազմակերպության անհատական շահերից: Այսպես, հասարակական շահեր ասելով հասկանում ենք անձանց անհատապես չորոշվող շրջանակի օրինական իրավունքներն ու շահերը՝ սոցիալ-տնտեսական, հոգևոր, բարոյական, մշակութային և այլ պահանջմունքները՝ կապված Սահմանադրությամբ, օրենքներով, միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքների և ազատությունների պահպանման, հասարակական անվտանգության և բարեկեցության, քաղաքացիական հասարակության ձևավորման և կայուն զարգացման ապահովման հետ: Այդպիսիք են, օրինակ, սոցիալական ապահովման, բնապահպանության, առողջապահության, գիտության, կրթության և այլ հասարակայնորեն նշանակալից ոլորտներում առկա կարևոր խնդիրների լուծման կապակցությամբ ծավալվող իրավահարաբերությունները: Հասարակության շահերը, կազմելով պետական շահի հիմքը, անխզելիորեն փոխկապակցված են, սակայն չեն նույնանում դրա հետ: Նշված պատճառաբանությամբ կարծում ենք, որ ավելորդ չէր լինի լրացնել ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածի օրենսդրական ձևակերպումը՝ որպես հանցագործության հետևանք նշելով նաև հասարակության շահերին պատճառված էական վնասը:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ, ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածի արդյունավետ կիրառումն ապահովելու նկատառումներից ելնելով, նպատակահարմար կլիներ ներկայացվող առաջարկություններին համապատասխան հստակեցնել տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմի օրենսդրական ձևակերպումը, ինչը թույլ կտա հստակ որոշել դրա գործողության սահմանները՝ պարզելով նշված նորմի ներգործության ոլորտում գտնվող արարքների շրջանակը:

¹ Ст'я Комментарий к УК РФ. Особенная часть. Под общ. ред. Скуратова Ю.И. и Лебедева В.М. М., Инфра М-Норма, 1996. С. 230.

² Ст'я Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Изд. 2-е, под ред. Радченко В.И. и Михлина А.С. М., Спарк, 2004. С. 476.

³ Ст'я Чеботарев Г.Н. Муниципальное право Российской Федерации: Учебно-методический комплекс. Тюмень: Изд-во ТГУ, 2001. С. 79; Минькова А.М. Уголовная ответственность за злоупотребление полномочиями в коммерческих и иных организациях. Дис. к.ю.н, Ростов-на-Дону, 2002. С. 57.

⁴ Ст'я Солдатова Л.А. Злоупотребление полномочиями и превышение полномочий. Дис. к.ю.н, Ульяновск, 2002. С. 95.

Ст'я Здравомыслов Б.В. Должностные преступления. Понятие и квалификация. М., Юрид. лит., 1975. С. 131; Светлов А.Я. Борьба с должностными злоупотреблениями. Киев, Наук. думка, 1970. С. 46; Чербедев С.С.

- Злоупотребление полномочиями по российскому уголовному праву. Дис. к.ю.н, М., 2008. С. 52.
- ⁶ Ст'а Трайнин А.Н. Должностные и хозяйственные преступления. М., Юрид. изд-во НКЮ СССР, 1938. С. 47;
- Кириченко В.Ф. Виды должностных преступлений по советскому уголовному праву. М., Изд-во АН СССР, 1959. С. 68;
- Сарницкий С.Н. Уголовная ответственность за злоупотребление полномочиями в коммерческих организациях. Дис. к.ю.н, Краснодар, 2004. С. 53.
- ⁷ Ст'а Комментарий к УК РФ. Расширенный уголовно-правовой анализ / Под общ. ред. Мозякова В. В.- М.: Экзамен, 2002. С. 680.
- ⁸ Ст'а Гордейчик С.А. Преступления управленческого персонала коммерческих и иных организаций в сфере экономической деятельности. Дис. к.ю.н, Волгоград, 1997. С. 75.
- ⁹ Ст'а Волженкин Б.В. Служебные преступления. М., Юрист, 2000. С. 307.
- ¹⁰ Ст'а Гордейчик С.А. Злоупотребление полномочиями: вопросы и ответы // Российская юстиция, 2004, N 5. С. 29
- ¹¹ Ст'а Постановление Пленума Верховного суда РФ от 16 октября 2009г. N 16 «О судебной практике по делам о злоупотреблении должностными полномочиями и о превышении должностных полномочий», п. 18 / Официальный сайт Верховного суда РФ. Документы Верховного суда РФ (Электронный ресурс) <http://www.suprcourt.ru/second.php>
- ¹² Ст'а Лопашенко Н. Еще раз об оценочных категориях в законодательных формулировках преступлений в сфере экономической деятельности // Уголовное право, 2002, N 2. С. 44.
- ¹³ Ст'а Андреев А., Гордейчик С.А. Понятие последствий преступлений в сфере экономической деятельности. // Российская юстиция. 1997 N 7. С. 44.

Анна Данибекян

Соискатель кафедры уголовного
и уголовно-процессуального права института
права и политики Российско-Армянского
(Славянского) университета

РЕЗЮМЕ

Основные вопросы уголовной ответственности за злоупотребление полномочиями служащими коммерческих или иных организаций

В настоящей статье рассматриваются основные проблемы и правовые вопросы, связанные с применением ст. 214 УК РА, предусматривающей уголовную ответственность за злоупотребление полномочиями служащими коммерческих или иных организаций. Статья содержит анализ сложившихся в теории уголовного права мнений и позиций, высказанных разными авторами относительно сферы применения данной нормы. В статье раскрывается сущность и характерные особенности данного общественно опасного деяния, анализируется законодательное описание признаков объективной стороны рассматриваемого состава преступления, на основании чего выявляются пробелы уголовного законодательства об ответственности за преступления в сфере службы частного сектора и формулируются практические предложения относительно его совершенствования.

Ключевые слова: злоупотребление полномочиями, уголовная ответственность, коммерческие или иные организации.

Anna Danibekyan

Post-graduate student of the Chair of Criminal Law
and Criminal Procedural Law of the Institute of Law and Policy
of the Russian-Armenian (Slavonic) University

SUMMARY

The main issues of the criminal liability for abuse powers by employees of commercial or other organizations

This article examines the main problems and legal issues related to the implementation of Art. 214 of Criminal Code of RA establishing criminal liability for abuse powers by employees of commercial or other organizations. The article contains analysis prevailing in theory of criminal law views and positions expressed by different authors in relation to the sphere of implementation of this norm. The article reveals the essence and outstanding characteristics of this socially dangerous act, analyses the legislative description of signs of the objective side of considered corpus delicti, on basis of which discovers omissions of criminal legislation about liability for offenses committed in scope of private sector's service and formulates practical proposals aimed at improving the legislation.

Keywords : abuse powers, criminal liability, commercial or other organizations.